ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.

Ընդհակառակութեամբ ստացանք

1. «Ծրագիր Հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների». Հաւաքեց և կազմեց Գր. Խալաթեանց. Մոսկվա. Տպարան Հերբէկ. 1887 ամի. Գինն է 50 կոպ.

—

2. «Երեխայրիք» 1882—1887 պատկերազարդ, առաջին գիրք—Գարուն. Թիֆլիս Մ. Ռօտինեանցի տպարան, 1887 ամի. Արշակ Մեհրաբեան—Սրինգ. Գինն է 50 կոպ.

ՊԱՀՈՆԱԿԱՆՔ.

(ՑՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ).

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

8 Յուլիսի. Վաղարշապատում վերաբնակող Տ. Անաստասիա Արամէլիքեան 1882 թուին, նախքան իւր մահը յօգուտ Վաղարշապատի Ծխական Հոգ. դպրոցների կտակած լինելով քառասուն բուբլի, իսկ եկեղեցւոյն՝ տասն բուբլի, Սինօդը որոշեց գրել Երեսփոխին և Հոգաբարձուներին որ յիշեալ գրամները ստանան հանդուցելոյ կտակակատար Պ. Ալէքսանդր Արամէլիքեանից։

—

24 Յուլիսի. Սինօդը ըստ տնօրէնութեան Վեհափառ Կաթուղիկոսի որոշեց թոյլ տալ Եկատերինօդար քաղաքի հայերի շինել դպրոցական շէնքեր տղայոց և օրիորդաց համար մակարդակին համեմատ, հասարակութեան ընտրած յանձնաժողովի ձեռքով։

—

19 Օգոստ. Սինօդը Երևանի թեմի Թեմական Փոխանորդի, յանուն Վեհափառ Կաթուղիկոսի յայտարարութեան համեմատ, ըստ հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի թոյլ տուեց Երևանայ Կոնսիստորիային Երևանայ առաջնորդարանի հիւսիսային կողմը հին անապատի տեղը քահանայացուաց պատրաստութեան համար ընծայարան շինել, կարողութիւն ունեցող եկեղեցիներից, քաղաքներից՝ տասնական, իսկ գիւղերից՝ հնգական բուբլի ստանալով։

—

24 Օգոստ. Սինօդը որոշեց պատուաւոր քաղաքացի հանդուցեալ Թադէոս Կէլէ—Շահենեանցի կտակին համեմատ պատուիրել Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանի Կոնսիստորիային որ կտակում նշանակուած յօգուտ ճեմարանի մի մի հարիւրանց 5% տոկոսաբեր բանկային երեք տոմսերը ստանալով՝